

# Ալեքսանդր Ծատուրյան

## Սուլթան և աստղագետ

10 հուլիսի, 1908 թ.)

«Մի տես, աստղագե՛տ, էս չար գիշերին
Ի՞նչ են մեզ ասում երկնային լույսեր…
Ասում են, տե՛ր իմ, այսօրվա գերին
Վաղն ազատություն կըերգե լույս-սեր…
«Ի՜նչ… ազատությո՞ւն… փըրփըրեց Սուլթան.
Հապա, իմ ո՞ւժը… զո՞րք, զե՜նք, թնդանո՜թ…
Ասա՛ աստղերիդ թո՛ղ գան օգնության,
Պիտ մորթեմ Օսմանն հենց վաղ առավոտ…
Ների՛ր ինձ, Խալի՛ֆ, դուրքա՛ն եմ գահիդ,
Ծաղրո՜ւմ են այսօր մեզ էն լի՛րբ աստղեր.
Ասում են անհաղթ տեր-փադիշահիդ,
Ասա՝ էն վա՛ղ էր,
Որ էշը կաղ էր…

Յարուկ Պոէմ